ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝
Մ.Գ.Թ., ԴՈՑԵՆՏ Հ.ԲԻՇԱՐՅԱՆ

<< >> նոյեմբեր 2023թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Սարգիս Արմենի Արմենակյանի՝ «Հռոմեական իրավունքի ռեցեպցիան և նրա դերն ու նշանակությունը եվրոպական իրավունքի ձևավորման և էվոլյուցիոն զարգացման համար» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի 2023 թվականի նոյեմբերի 13-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 4):

Մասնակցում էին՝

Իրավագիտության ամբիոնի վարիչ ի.գ.թ. Ի. Իսկանդարյանը, ամբիոնի դասախոսներ՝ ի.գ.թ., դոցենտ Վ. Թորոսյանը, ի.գ.թ. Դ.Սարգսյանը, ի.գ.թ. Ա.Թադևոսյանը, ի.գ.թ. Կ. Բաբայանը, ի.գ.թ. Ս. Իսկանդարյանը, ի.գ.թ. Էդ. Ավետիսյանը, ի.գ.թ. Կ. Բատիկյանը, Ա. Գյուլումյանը, Լ.Զիրոյանը, Ա.Բիշարյանը, Մ. Համբարձումյանը, Գ. Ադոնցը, Զ. Մկրտչյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը, կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Թեկնածուական ատենախոսությունը նվիրված է հռոմեական իրավունքի ռեցեպցիայի՝ որպես իրավական համակարգի և իրավական մշակույթի կարևորագույն երևույթի տեսագործնական ուսումնասիրությանն ու համալիր հետազոտությանը:

Նման մոտեցումը հանգեցրել է իրավունքի համաշխարհային ստանդարտների կայացմանն ու իրավունքի ժամանակակից տեսության ձևավորմանը:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք և ըստ էության համապատասխանում է ատենախոսի կողմից իր առջև դրված նպատակներին ու խնդիրներին:

Ատենախոսության հեղինակը հռոմեական իրավունքի հետազոտության արդիականությունը պայմանավորել է այն հանգամանքով, որ չնայած իրավունքի տեսությունը բացահայտում է հռոմեական իրավունքի հայեցակարգերը, սկզբունքներն ու իրավական կառուցակարգերը, սակայն ընտրված ինստիտուտի ուսումնասիրությունը եվրոպական իրավական համակարգի համատեքստում թույլ է տալիս կանխորոշել նաև ազգային իրավական համակարգի վրա անդրադարձող հռոմեական և արդի եվրոպական իրավունքի ինստիտուտների գործառնությունը:

Աշխատանքում միջազգային փորձի համալիր ուսումնասիրության հիման վրա՝ հեղինակը հանգամանորեն վերլուծել է եվրոպական ընդհանուր իրավունքի մեթոդաբանական և իրավական նախադրյալները, եվրոպական ընդհանուր իրավունքի ձևավորման պատմական նախադրյալները, բացահայտել է հռոմեական իրավունքի ուսումնասիրության շրջափուլային մոտեցման էությունը, ներկայացրել է հռոմեական իրավունքի ռեցեպցիայի վերաիմաստավորման տենդենցները Արևմտյան եվրոպայում ընդհանուր իրավունքի ձևավորման համատեքստում, ինչն անառարկելիորեն մեծ կշիռ է հաղորդում սույն աշխատանքին արդիականության տեսանկյունից:

Աշխատանքում բարձրացված հարցերի համալիր վերլուծությունը կարող է օգտակար լինել նաև ներկայումս Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտում իրականացվող ոչ սակավաթիվ փոփոխությունների համատեքստում: Այս

առումով ևս ընտրված թեմայի արդիականությունն ու կարևորությունը կասկած չեն հարուցում:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության հեղինակը նշում է, որ գիտական նորույթը, ամենից առաջ, արտահայտվում է «հռոմեական իրավունքի ռեցեպցիա» երևույթի նորովի մեկնաբանության, ինչպես նաև քննարկվող հիմնախնդրի համակարգված և ամբողջական հետազոտության մեջ:

Գիտական նորույթը պայմանավորված է նաև պաշտպանության ներկայացված դրույթներով, որոնց մեծամասնությունը, մեր կարծիքով, արժանի են առանձին ուշադրության: Այսպես՝ ատենախոսության հեղինակը գտնում է, որ՝

1. Իրավունքի տեսության մեջ ռեցեպցիան դիտարկվում է բացառապես իբրև հիմնական իրավական նորմերի և ինստիտուտների փոխառում կամ ընդօրինակում և այս առումով ըստ հեղինակի ռեցեպցիան հնարավոր է միայն ընդօրինակողի հստակ գաղափարախոսության միջոցով, որը թույլ է տալիս իրականացնել, ընդօրինակել ու յուրացնել օտար իրավական մշակույթը՝ ինստիտուտները, նորմերը, գաղափարները, հայեցակարգերը, կառուցակարգերը:

2. Աշխատանքում հստակորեն առանձնացվել են ռեցեպցիայի կամովին և ոչ կամովին տեսակներն ու յուրովի բացահայտվել դրանց առանձնահատկություններն ու բացահայտվել, որ ռեցեպցիան որպես կանոն ի հայտ է գալիս պետահիրավական ինստիտուտների ճգնաժամերի ժամանակ ու կայանում է օտարերկրյա իրավունքի իրավական նորմերի, ինստիտուտների կամովին օգտագործման մեջ՝ գաղափարական, սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառներով:

3. Եվրոպական ընդհանուր իրավունքը սոցիալական իրականության ակտիվ բաղկացուցիչն է, որի ինստիտուցիոնալ հիմքն են կազմում պատմականորեն ձևավորված ընդհանուր իրավունքի համակարգը, հայեցակարգային մոտեցումները, հիմնարար սկզբունքները, որոնք արտացոլված են Եվրոպական միության և ողջ եվրոպական իրավական համակարգում, որոնց ակունքները հռոմեական դրական իրավունքն ու իրավագիտությունն են: Հռոմեական իրավունքի և իրավագիտության սկզբունքներն ու հայեցակարգային մոտեցումները չեն կորցրել իրենց տեսական և գործնական նշանակությունը արդի եվրոպական իրավունքի, իրավագիտության, իրավակիրառ պրակտի-

կային ոլորտում:

4. Հռոմեական իրավունքի ազդեցությունը դիտարկվում է նաև ժամանակակից հայ ազգային իրավունքի վրա, այնքանով, որքանով մասնավոր իրավունքում ներառվել են ազատ շուկայական հարաբերություններին բնորոշ քաղաքացիական-իրավական ինստիտուտներ: Ըստ հեղինակի՝ Հայաստանում որպես հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիայի առանձնահատկություն կարելի է դիտարկել այն հանգամանքը, որ հռոմեական իրավունքը կարևոր դեր է խաղացել ոչ այնքան օրենսդրության մշակման (դրա նշանակությունն այս ոլորտում կարելի է անուղղակի համարել), որքան իրավաբանական գիտություն զարգացման գործում: Ուստի, այս առումով տեղին կլինի խոսել հռոմեական մասնավոր իրավունքի ոգու, այլ ոչ թե նրա դոգմայի ռեցեպցիայի մասին:

Ատենախոսության նշանակությունը տեսական և գործնական կիրառությունների համար

Հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը սահմանվում է պատմահիրավական քաղաքակրթական մոտեցումների օգնությամբ հռոմեական իրավունքի բովանդակության վերլուծությամբ և իրավագիտության համար դրա արժեքի բացահայտմամբ: Աշխատանքի եզրակացություններն ու դրույթները թույլ են տալիս ընդարձակել հռոմեական իրավունքի ռեցեպցիայի մոդելների յուրահատկությունը, օրինակ, եվրոպական ընդհանուր իրավունքի համակարգի կայացման և ձևավորման տեսանկյունից:

Գործնական և տեսական դրույթներն ու եզրակացությունները կարող են հաշվի առնվել իրավունքի ռեցեպցիայի, իրավունքի տեսության, եվրոպական իրավունքի հիմնախնդիրների ուղղությամբ իրականացվող գիտական հետազոտություններում, ուսումնական ձեռնարկների, մեթոդաբանական ձեռնարկների մշակման գործընթացում, իրավաբանական կրթություն ստացող ուսանողների համար:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Հեղինակն ատենախոսության շարադրանքում ներկայացնելով իրավական համակարգ և իրավապաշտպան համակարգ կատեգորիաների էությունը,

բացահայտելով բազմաթիվ հեղինակների կարծիքներն այս երկու ինստիտուտների վերաբերյալ՝ ի վերջո զերծ է մնացել լիարժեք ներկայացնելու իր սեփական հեղինակային տեսակետը տվյալ եզրույթների ընդհանրությունների և տարբերությունների մասին:

2. Հարգելով ատենախոսի ակադեմիական ազատությունը և գնահատելով նրա կողմից հռոմեական իրավունքի ուսումնասիրության շրջափուլային մոտեցման ընտրության կարևորությունը, այդուհանդերձ ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակի կողմից պարզաբանվեր կամ բացահայտվեր, թե ի վերջո նման մոտեցման ընտրությունը ինչ նպաստ է հաղորդում հռոմեական իրավունքի առավել բազմակողմանի ուսումնասիրությանը և ինչ արժեք կամ առավելություն է հաղորդում տվյալ գործընթացին:
3. Պաշտպանության ներկայացվող չորրորդ դրույթն իր բնույթով առավելապես նկարագրողական շարադրանք է հռոմեական իրավունքի հիմնարար կարևորության մասին, որքան գիտական նորույթ: Հեղինակը որպես նորույթ է մատնանշում հռոմեական իրավունքի անփոխարինելի դերակատարությունը մի շարք կարևորագույն իրավական ինստիտուտների կայացման գործում, ինչն ինչ խոսք անվիճելի է, սակայն նման դրույթն ինքն իրենով կարող էր լրամշակվել գիտական նորույթին բնորոշ ինքնատիպություն և յուրօրինակություն ձեռք բերելու համար:
4. Հայաստանի Հանրապետության իրավունքում, մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքում հռոմեական իրավունքի հայեցակարգերի և ինստիտուտների ռեցեպցիային նվիրված հատվածում (երկրորդ գլխի 2.4 պարագրաֆ) հեղինակը չի անդրադառնում ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ տեղ գտած հռոմեական իրավունքի հիմնարար հայեցակարգերի ռեցեպցիայի հիմնախնդիրներին (պրոբլեմատիկային), մասնավորապես ՀՀ քաղաքացիակն օրենսգրքի կառուցվածքային այնպիսի խնդիրներին ինչպիսիք իրային /ius in re/ իրավունքները չսահմանելն ու գույքային այլ իրավունքներից չտարանջատելը, դելիկտերի ինստիտուտի չտարանջատվածությունը պայմանագրային պատասխանատվության ինստիտուտից և այլն:

Եզրակացություն

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը: Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան:

Սույն կարծիքում նշված դիտողություններն, ըստ էության կարող են հաղթահարվել մասնագիտական խորհրդում հաջողությամբ պաշտպանելու դեպքում և չեն ազդում Սարգիս Արմենի Արմենակյանի գիտական աշխատանքի ընդհանուր դրական արդյունքի վրա:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սարգիս Արմենի Արմենակյանի՝ ***«Հռոմեական իրավունքի ռեցեպցիան և նրա դերն ու նշանակությունը եվրոպական իրավունքի ձևավորման և էվոլյուցիոն զարգացման համար»*** վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը կարող է արժանանալ **ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն»** մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀԵՀ Իրավագիտության ամբիոնի վարիչ՝ իգ.գ.թ., Ի. Իսկանդարյան

Հաստատում եմ Ի. Իսկանդարյանի ստորագրությունը

ՀԵՀ գիտական խորհրդի քարտուղար՝ իգ.գ.թ., դոցենտ, Վ.Թորոսյան